ձին. եւ ասէ. «Որչափ ես ասա՝ ի սեղանէ
իմէ կերիցես. բայց ինձ գրեսցես, զոր ինչ
100 պատուիրեցից»: Եւ ես համբուրեցի զաջն եւ
գնացի: Եւ առաքեաց ինձ թուղթ եւ թանաք.
եւ սկսայ գրել չրջաբերականս, զոր ամէն աշ-
խարհ կ՝առաքէր նուիրակ եւ թղթեր եկեղե-
ցեաց եւ որիշ որիշ առաջնորդաց եւ խոճայից
105 եւ աւագ իրիցանց: Իսկ Ղուկաս եպիսկոպոսն
զօտաս լի առնէր ամենայն բարօք եւ փափուկ
կերակրովք, ազգի ազգի ընծայիւք, միխիթա-
րութեամբ եւ բազում բարերարութեամբ:
Այլ եւ ամենայն միաբանք վանացն սիրէին
110 զիս եւ պատուէին առաւել քան զչափն, որում
արժանի չէի. որոց Տէրն վարձահատոյց լիցի:
Եւ կացի անդ Վարագայ Խաչէն մինչեւ ի
Զատիկն Հայոց. գրէի, այլ եւ յեկեղեցոջն
սպասաւորէի ընդ այլ սարկաւագսն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՑ

Եւ յետ աւուրց ինչ տեղացի վարդապետն
ժողովէ զամենայն ուխտաւորս եւ առեալ տանի
շուր ածէ ամենայն աստուածակոխ սուրբ
Տնօրինականս, որպէս գրած է ի ցուցակն: Եւ
5 ամէն տեղ շարական ասի. եւ քարոզէ ասե-
լով, պատմելով, զամենայն տեղիս նոցա
յայտնելով, թէ այս այն տեղն է եւ այն՝ այս.
ապա յորդորէ եւ ասէ. «Հազար երանի ձեզ եւ
ձեր աչացն, որ արժանի եղաք տեսանել զայս
10 սուրբ տեղիքս. թէպէտ երկարութիւն ճանա-
պարհին եւ նեղութիւն, վիշտ եւ չարչարանք

99 ինձ: — 110 յորում: